ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2018 թվականի N _____ -Ա

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 21 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերով՝ ՀՀ վարչապետը որոշում է

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի համակարգում ստեղծել փորձաքննական հանձնաժողով:

2. Հանձնաժողովի կազմը ընտրել հետևյալ պետական մարմինների ներկայացուցիչներից՝

1) ՀՀ քաղաքաշինության կոմիտե
2) ՀՀ առողջապահության նախարարություն
3) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
4) ՀՀ բնապահպանության նախարարություն
5) ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
6) ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
7) ՀՀ կրթության և գիտության նախարարություն
8) ՀՀ մշակույթի նախարարություն
9) ՀՀ պաշտպանության նախարարություն
10) ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
11) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
12) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

3. Ելնելով քաղաքաշինական օբյեկտի նշանակությունից, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահը սույն որոշման 1-ին կետով սահմանված պետական մարմինների ներկայացուցիչներից, յուրաքանչյուր դեպքի համար առանձին, որոշում է մասնակիցների քանակը և հաստատում է հանձնաժողովի անհատական կազմը:

4. Հաստատել՝ հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
---------- -ի N -Ա որոշման

Կ Ա Ր Գ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Պետական համալիր փորձաքննություն իրականացնող փորձաքննական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեությունն ուղղված է օրենսդրությամբ սահմանված բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր) մշակման բարձր որակի ապահովմանը, քաղաքաշինական օբյեկտների անվտանգության և կայունության երաշխավորմանը, կառուցապատման գործառույթների մասնագիտական և լիարժեք հիմնավորվածությանը, տարբեր մարմինների կողմից տրված եզրակացություններում առկա տարաձայնությունների հարթեցմանն ու լուծմանը:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված փաստաթղթերը կամ թույլտվությունները կարող են համաձայնեցվել համայնքի ղեկավարի կողմից՝ միայն հանձնաժողովի դրական եզրակացության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի համապատասխան հրամանի առկայության դեպքում:

3. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահն է:

4. Հանձնաժողովի նիստերին, խորհրդատուի կարգավիճակով, կարող են հրավիրվել նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ոլորտի մասնագիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ անձինք:

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ նախագծերի քննարկման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում և կարգով: Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ, կարող են գումարվել արտահերթ կամ արտագնա նիստեր:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները:

7. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հանձնարարությամբ իր տեղակալը:

8. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով:

9. Հանձնաժողովի նախագահը որոշում է հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամը:

10. Հանձնաժողովի նիստերի օրակարգը հանձնաժողովի անդամներին է փոխանցվում նիստից առնվազն 5 օր առաջ:

11. Հանձնաժողովի գործավարությունը վարում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն:

12. Հանձնաժողովի նպատակը՝

1) նախագծային փաստաթղթերի վերաբերյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունների, մասնագիտական եզրակացությունների կամ կարծիքների ամբողջականության ապահովումը,
2) հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքների համապատասխանության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով տարբեր մարմինների կողմից իրականացված փորձաքննությունների, տրված եզրակացությունների կամ կարծիքների ամփոփումը մեկ ընդհանուր փաստաթղթում:

13. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) նախագծային փաստաթղթերի վերաբերյալ համընդհանուր կարծիքի ձևավորումը.
2) համապատասխան պետական մարմինների կանոնադրական խնդիրներին առնչվող դրույթների վերաբերյալ հանձնաժողովի քննարկմանն առաջարկություններ ներկայացնելը՝ նախագծային փաստաթղթերի կազմում ներառելու համար.
3) նախագծային փաստաթղթերի մշակման գործառույթների թափանցիկության ապահովմանը նպաստելը.
4) նախագծային փաստաթղթերի մշակմանն առնչվող այլ խնդիրներ:

14. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքների համապատասխանության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով տարբեր մարմինների կողմից իրականացրած փորձաքննությունների, տրված եզրակացությունների կամ կարծիքների ապահովումն է.
2) նախնական փորձագիտական եզրակացության հետ տրամադրում է կառուցապատողին այն փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների և գերատեսչությունների ցանկը, որոնց եզրակացություններն անհրաժեշտ են համալիր փորձաքննությունն ավարտելու համար.

15. Հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն է տրվում միայն բոլոր անդամների համաձայնության դեպքում: Հանձնաժողովը կարող է նիստերն անցկացնել նաև հարցման միջոցով՝ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ կամ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ: Հարցման միջոցով հանձնաժողովի նիստն անցկացնելու դեպքում հանձնաժողովի անդամի կարծիքը համարվում է ստացված, եթե այն արտահայտվել է նրա կողմից ստորագրված փաստաթղթում, ընդ որում,

նախագծային փաստաթղթերի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները լիազոր մարմին ներկայացնում են հարցումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, նշված ժամկետում առաջարկություններ ու դիտողություններ չներկայացնելու դեպքում, համարվում է, որ կարծիք չներկայացրած մարմինը քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ առարկություններ չունի:

16. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն:

17. Նիստի արձանագրության մեջ նշվում է՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու ժամը.
2) նիստի օրակարգը.
3) նիստին մասնակցող, հրավիրված անձանց անունները.
4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.
5) ընդունված որոշումները, դրանց տարածման և (կամ) հրապարակման ձևերը:

18. Հանձնաժողովի քարտուղարը 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է նիստի արձանագրությունը, որն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից:

19. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է հանձնաժողովի նիստերը.
2) հաստատում է հանձնաժողովի օրակարգը և ստորագրում հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.
3) որոշում է հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը.
4) լսում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս համապատասխան ցուցումներ.
5) հանձաժողովի նիստում (կամ հարցման արդյունքում) հարցի վերաբերյալ միասնական կարծիք չձևավորելու դեպքում, լիազոր մարմինն ամփոփում է կարծիքները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի առաջիկա նիստում զեկուցելու համար: Նախարարական կոմիտեի որոշումը հիմք է հարցի վերաբերյալ հանձնաժողովի վերջնական որոշումն ընդունելու համար.
6) հանձնաժողովի ընդունած եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ կառուցապատողին.
7) նախագծային փաստաթղթերի վերաբերյալ բացասական եզրակացությունների կամ կարծիքների հիման վրա՝ մերժման համապատասխան հիմքերով կառուցապատողին է վերադարձնում նախագծային փաստաթղթերի փաթեթը.
8) իր իրավասության սահմաններում իրականացնում է հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

20. Հանձնաժողովի անդամը՝

1) հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ կարող է ներկայացնել բանավոր և (կամ) գրավոր կարծիք.
2) կարող է ներկայացնել հանձնաժողովի գործառույթներին առնչվող հարցեր՝ նիստի օրակարգում ընդգրկելու համար.

3) մասնակցում է որոշումների ընդունման համար քվեարկությանը և ստորագրում հանձնաժողովի ընդունած եզրակացությունները:

21. Հանձնաժողովի նիստերում ընդունված որոշումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի ինտերնետային կայքում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1.	**Անհրաժեշտությունը**
	«Պետական համալիր փորձաքննություն իրականացնելու նպատակով փորձաքննական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերով սահմանված պահանջների կատարման անհրաժեշտությամբ:
2.	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 21-րդ կետով ՝ օրենսդրությամբ սահմանված բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան (կատեգորիա) ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության իրականացումը վերապահված է քաղաքաշինության բնագավառի կառավարման պետական լիազորված մարմնին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեին: Ներկայումս գործող ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ համալիր փորձաքննության ենթակա են այն քաղաքաշինական (այդ թվում՝ ծրագրային) փաստաթղթերը, որոնցով, բացի քաղաքաշինական նորմերին համապատասխանության անհրաժեշտությունից, օրենքով պահանջվում է նաև այլ պետական կառավարման մարմինների կողմից (մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանության վրա ազդեցության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, արտակարգ իրավիճակների կանխարգելման, կապի համակարգերի, տրանսպորտային, էներգետիկ ու ինժեներական այլ ենթակառուցվածքների, արդյունաբերական անվտանգության, ընդերքի արդյունավետ օգտագործման, տեխնոլոգիական, սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման և այլն) փորձագիտական կամ մասնագիտական եզրակացության տրամադրում: Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի 15.1-րդ կետի համաձայն՝ պետական համալիր փորձաքննությունն իրականացվում է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված՝ լիազոր մարմնի համակարգում գործող փորձաքննական հանձնաժողովի կողմից (շահագրգիռ մարմինների համապատասխան մասնագետների ներգրավմամբ), որի անհատական կազմը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի) հրամանով: Ընդ որում, հանձնաժողովի կազմը հաստատվում է յուրաքանչյուր դեպքի համար առանձին, ելնելով տվյալ օբյեկտի գործառնական նշանակությունից՝ դրա փորձագիտական եզրակացության համար անհրաժեշտ շահագրգիռ պետական կառավարման մարմինների մասնագետների ներգրավմամբ: Ուստի, Նախագծի մշակումը բխում է վերը նշված իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման անհրաժեշտությունից:

3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	Խնդրո առարկա հարցի համատեքստում իրականացվող քաղաքականությունն ուղղված է օրենսդրությամբ սահմանված բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման բարձր որակի ապահովմանը, ըստ այդմ՝ քաղաքաշինական օբյեկտների անվտանգության և կայունության երաշխավորմանն ու կառուցապատման գործառույթների մասնագիտական և լիարժեք հիմնավորվածությանը:
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Նախագծի մշակման հիմնական նպատակն է՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, օրենսդրությամբ սահմանված բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան ունեցող օբյեկտների պետական համալիր փորձաքննության իրականացումը: Նախագծով առաջարկվում է քաղաքաշինական պետական համալիր փորձաքննությունն իրականացնել ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված լիազոր մարմնի համակարգում գործող փորձաքննական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից՝ շահագրգիռ մարմինների համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Նախագծի համաձայն՝ հանձնաժողովը համակարգում և ամփոփում է պետական համալիր փորձագիտական եզրակացություն հայցող պատվիրատուի կողմից ստացված շահագրգիռ մարմինների եզրակացությունները (համաձայնեցումները): Հանձնաժողովի պետական համալիր փորձագիտական եզրակացությունը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից և տրամադրվում պատվիրատուին:
5.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**
	Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից:
6.	**Ակնկալվող արդյունքը**
	ՀՀ օրենսդրությամբ սահմանված բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճան ունեցող օբյեկտների նախագծերի մշակման բարձր որակի ապահովում, դրանց անվտանգության և կայունության երաշխավորում:
7.	**Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են) –** չկան:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական համալիր փորձաքննություն իրականացնելու նպատակով փորձաքննական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի ավելացման և նվազեցման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.**
   «Պետական համալիր փորձաքննություն իրականացնելու նպատակով փորձաքննական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ընդունմամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:
2. **Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.**
   Համապատասխանում է:
3. **Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)** – չկան:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.**
   «Պետական համալիր փորձաքննություն իրականացնելու նպատակով փորձաքննական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը տեղադրվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կայքում /www.minurban.am/: